

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ\***

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների  
գիտական լաբորատորիայի վարիչ  
lingualal51@mail.ru*

DOI: 10.54503/1829-4073-2022.2.175-188

## **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՎԵՐԱՑԱՐԿՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄ**

**Բանալի բառեր՝** փոխակերպում, վերացարկում, բառակապակցություն, բարդություն, նախաձանցման կաղապար, վերջաձանցման կաղապար, ածանցակերպ:

### **Ներածություն**

Լեզուն օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները և նրանց բնորոշ հատկանիշներն արտացոլում է որոշակի կաղապարների միջոցով, որոնք պայմանավորված են տվյալ լեզվակիր հանրության լեզվամտածողությամբ և համապատասխանում են նրա վերացարկված մտածողության մոդելներին:

Օբյեկտիվ իրականության արտացոլման գործընթացում լեզուն և գիտակցությունը հանդես են գալիս միասնաբար. առանց մեկի ակտիվ գործունեության, արտացոլման գործընթացը չի կարող կայանալ. դրանք փոխադարձաբար կապված են միմյանց և լրացնում են իրար, և հնարավոր չէ առաջնահերթություն տալ դրանցից մեկն ու մեկին: Լեզվական արտացոլումը լեզվի և գիտակցության բնագավառներից անցնում է լեզվի և մտածողության ոլորտ, որտեղ կարևորվում է լեզվամտածողության դերը՝ արտաքին աշխարհի արտացոլման համապատկերում: Օբյեկտիվ իրականության առարկաները, իրերը և նրանց բնորոշ հատկանիշները տարբեր կերպ են արտացոլվում լեզվական տարբեր հանրությունների լեզվական քարտեզում, որ պայմանավորված է այդ հանրությունների լեզվամտածողության տարբերություններով. յուրաքանչյուր լեզվակիր հանրություն ունի իրեն բնորոշ լեզ-

\* Հոդվածը ներկայացվել է 25.11.21, գրախոսվել է 25.11.21, ընդունվել է տպագրության 22.08.22:

### **Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման...**

վամտածողություն, որ որոշում է արտաքին աշխարհի լեզվական արտացոլման վերացարկվածության աստիճաններն ու արտացոլման մակարդակները:

Լեզվական արտացոլման դրսևորումներից է փոխակերպումը<sup>1</sup>: Փոխակերպումն օբյեկտիվ իրականության արտացոլման վերացարկված մեխանիզմ է, որի տարբեր աստիճաններում ի հայտ են գալիս որոշակի փոխակերպներ, որոնք հատկանշվում են վերացարկվածության տարբեր աստիճաններով: Փոխակերպումը լեզվական միևնույն բովանդակության արտահայտությունն է լեզվական այլ կառույցներով, այլ կերպ ասած՝ փոխակերպել մի նախադասություն՝ նշանակում է այն փոխել մի քերականական ձևից մյուսի՝ առանց փոխելու նրա իմաստը (J.C. Nesfield)<sup>2</sup>:

Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից՝ սերման կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կաղապարները՝ որպես արդյունք նախադասություն – բառակապակցություն փոխակերպական գործընթացի:

Սույն հոդվածում կդիտարկենք բառակապակցությունների և բաղադրությունների սերման կաղապարները՝ որպես լեզվական արտացոլման վերացարկված մեխանիզմի դրսևորումներ:

#### ***1. Նախադասությունների փոխակերպում բառակապակցության***

Բառակապակցությունները սերում են երկրորդական նախադասություններից, որոնք իրենց հերթին միջուկային նախադասությունների փոխակերպման արդյունք են: Նախադասություն – բառակապակցություն փոխակերպումն ուղեկցվում է կառույցի ստորոգումային հատկանիշի չեզոքացմամբ և անվանական կապակցության ձևավորումով: Բառակապակցությունը լեզվամտածողության առավել վերացարկված մտածողության հետևանք է՝ համեմատած նախադասությունների, որոնք, կարելի է ասել, լեզվամտածողության նախնական աստիճանի (հաղորդակցական) միավորներ են: Փոխակերպման գծային պլանում բառակապակցությունները բնութագրվում են

<sup>1</sup> Փոխակերպման մասին տե՛ս Պետրոսյան և ուրիշ. 1975: Պետրոսյան 1987: ЛЭС 1990. Ахманова 1969. Стариченок 2008. Խաչատրյան 2021:

<sup>2</sup> Զահուկյան 1973, 502:

## Խաչատրյան Լ.

երկակի դերով. նախ՝ որպես միջուկային նախադասությունների փոխակերպման հետևանք, երկրորդ՝ որպես սերող կաղապարներ՝ բաղադրյալ բառերի ձևավորման համատեքստում:

Փոխակերպումից առաջացած բառակապակցությունները բաժանվում են ազատ և կայուն տեսակների:

ա) *Ազատ կապակցությունները* երկրորդական նախադասություններից սերած փոխակերպներ են՝ ոչ ստորոգումային բառակապակցություններ, որոնք հոմանշային հարաբերություն են ցուցաբերում բարդ նախադասության ստորադաս բաղադրիչների (նախադասությունների) նկատմամբ: Հմմտ. Ագուլեցի վաճառականը հպարտությամբ ցույց էր տալիս այն ամենը, *ինչ ինքն ուներ* (ՀՂ): Ագուլեցի վաճառականը հպարտությամբ ցույց էր տալիս *իր ունեցածը*:

Փոխակերպման ընթացքում ստորադաս նախադասությունը բայական լրացումներով հանդերձ վերածվում է հոմանիշ անվանական բառակապակցության. առաջանում է անվանական անդեմ նախադասություն՝ անվանական անդամների խմբով: Հմմտ.

Մխիթարը վերադարձավ Հալիժոր (ՍԽ) – *Մխիթարի վերադարձը Հալիժոր*: Ինքնաթիռը թռչում է Մոսկվայի երկնականարով – *Ինքնաթիռի թռիչքը Մոսկվայի երկնականարով* (ԳԹ):

բ) *Կայուն կապակցություններն* ի հայտ են գալիս նախադասություն > ազատ կապակցություն > կայուն կապակցություն փոխակերպման (փոխկաղապարման) երկրորդ աստիճանում՝ կապակցության բաղադրիչների շարահասական դիրքի համապատասխան տեղաշարժերի կամ որոշ բաղադրիչների զեղչման հետևանքով:

• Նախադասության բայ-ստորոգյալն իր մակբայ-լրացումով փոխակերպվում է դերբայական դարձվածի, իսկ կաղապարի շարահասական դիրքի համապատասխան տեղաշարժով (փոխակաղապարմամբ) մակբայ-լրացումը դառնում է գոյական որոշյալի ածական-որոշիչ<sup>3</sup>: Հմմտ. խոսքը նոր է ասել > նոր ասված խոսք > *նոր խոսք ասել*, աշխարհը նոր է հայտնաբերվել > նոր հայտնաբերված աշխարհ > *նոր աշխարհի հայտնաբերել*, էջը նոր է բացել > նոր բացած էջ > *նոր էջ բացել*, կյանքը նոր է տվել > նոր տված

<sup>3</sup> Խաչատրյան 1996, 124–125:

կյանք > նոր կյանք տալ, կապիտալն էժան է ձեռք բերել > էժան ձեռք բեր(վ) ած կապիտալ > էժան կապիտալ ձեռք բերել և այլն:

• Ազատ կապակցությունների դերբայ-որոշիչը կարող է զեղչվել, և մակբայ-լրացումը կայուն կապակցություններում փոխկադապարմամբ կարող է հանդես գալ իբրև ածական-որոշիչ: Հմմտ. աստղը վատ է լույս տալիս > վատ լույս տվող աստղ > վայր աստղ (-ի տակ ծնվել), աչքը լավ է տեսնում > լավ տեսնող աչք > լավ աչք (ունենալ), լավ աչքով (նայել), աչքը վատ է տեսնում > վատ տեսնող աչք > վայր աչք (ունենալ), վայր աչքով (նայել), ականջը ծանր է լսում > ծանր լսող ականջ > ծանր ականջ:

Այդ կադապարով են առաջացել նաև *ծանր ձեռք, ձեռքը ծանր, ծանր գլուխ, գլուխը ծանր, ծանր խոսք* կայուն կապակցությունները:

Գոյականական բառակապակցության գոյականական անդամի զեղչման հետևանքով որոշային դիրքի ածականը փոխկադապարմամբ ձեռք է բերում պարագայական գործառույթ բայական անդամի լրացման դերում՝ հատկանշվելով մակբայի արժեքով<sup>4</sup>: Այսպես՝ *հանգիստ* սրտով մնալ > *հանգիստ* մնալ, *հանգիստ* խղճով կենալ > *հանգիստ* կենալ, ծովը տանել՝ *ծարավ վիճակում* հետ բերել > ծովը տանել՝ *ծարավ* հետ բերել, դառը դատել՝ *դատարկ գրպանով* նստել > դառը դատել՝ *դատարկ* նստել և այլն:

## **II. Բառակապակցությունների փոխակերպում բաղադրյալ բառերի**

Բարդ և ածանցավոր բառերը բառակապակցությունների և դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք են<sup>5</sup>: Բաղադրյալ բառերը լեզվամտածողության մակարդակով մեկ քայլ բարձր են բառակապակցություններից. ըստ այդմ՝ բաղադրյալ բառերը վերացարկված լեզվամտածողության առավել բարձր աստիճանի դրսևորումներ են, քան նրանց սերիչ կադապարները՝ բառակապակցությունները: Ընդ որում՝ ձևավորման ժամանակագրությամբ բարդությունները նախորդում են ածանցավոր բառերին. ածանցական կազմություններն առավել բարձր վերացարկվածության հետևանք են և հաջորդում են բարդություններին՝ եզրափակելով փոխակերպման գործընթացը:

1. *Բարդությունները* կարելի է քննել ըստ վերջնաբաղադրիչի արտահայտության պլանի: Ըստ այդ սկզբունքի՝ բարդությունները լինում են երեք տե-

<sup>4</sup> Соколова 1973, 77:

<sup>5</sup> Զահուկյան 1973, 565:

## Խաչատրյան Լ.

սակի՝ *բայահիմքով, անվանական բաղադրիչով և բայաբաղադրիչով ձևավորված կազմություններ*:

Ա. *Բայահիմքով կազմություններ*. Այս կարգի բարդությունները պահանում են սերող կաղապարների բաղադրիչների շարահյուսական (ստորադասական) հարաբերությունները. ամբողջ բարդությունը հատկանշվում է ենթակայական կամ հարակատար դերբայի նշանակություններով:

ա) *Բարդություններ*, որոնց վերջին բաղադրիչն արտահայտում է *ենթակայական դերբայի իմաստ*: Այդպիսի բարդությունների մեջ կարելի է առանձնացնել այն կազմությունները, որոնց վերջին բաղադրիչները գրաբարյան կանոնավոր բայերի երկրորդ հիմքի ձևեր են: Այդպիսի բարդության կաղապարներն ունեն երկանդամ կառուցատիպ, ձևավորվել են տարբեր կաղապարներով. կաղապարի տարրերը հատկանշվում են բաղադրիչների տարաբնույթ հարաբերություններով:

Այսպես, հետևյալ բարդությունները առաջացել են *գոյական + բայահիմք* > *գոյական* կաղապարով, որոնց բաղադրիչներն արտահայտում են «ստորոգյալ-խնդիր» հարաբերություն.

*մատուց* > (< մատուցանել) - կառամատուց, նավամատուց, *ասաց* > (< ասել) - տաղասաց, ողբասաց, երգասաց, բանասաց, *խաղաց* > (< խաղալ) - լարախաղաց:

Որոշ բարդություններ առաջացել են *գոյական + բայահիմք* > *ածական* կաղապարով, ինչպես՝

*ցույց* > (< ցուցանել) - ուղեցույց, կողմնացույց, հեռուստացույց, *աղաց* > (< աղալ) - սրճաղաց, ոսկրաղաց, *կեզ* > (< կիզուլ) - հրկեզ, *(զ)անց* > (< անցանել) - երդմնազանց, օրինազանց և այլն:

Ենթակայական դերբայի իմաստով բարդությունների մեջ հանդիպում են գրաբարի անկանոն բայերի երկրորդ հիմքով կազմություններ, որոնք ձևավորվել են *գոյական + բայահիմք* > *գոյական կամ ածական* կաղապարով, ինչպես՝ *արար* > (< առնել) - շինարար, կազմարար, գյուտարար, *տու* > (< տալ) - լուսատու, բերքատու, մրգատու, խորհրդատու, *տար* > (< տանել) - բեռնատար, նավթատար, գազատար, ուղևորատար, մարդատար, *կեր* > (< ուտել) - բուսակեր, խոտակեր, հացակեր, մսակեր, սրտակեր և այլն:

Եթե փորձենք հետընթաց քայլերով վերականգնել վերոբերյալ բարդությունների սերող կաղապարները, կստանանք փոխակերպման գործընթացի հետևյալ դրսևորումները.

### Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման...

Այս մարդը *խնդիր է հարուցում* (միջուկային նախադասություն): Այս մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: Այս մարդը, *որ խնդիր է հարուցում*, չի ընդունվում ունկնդիրների կողմից: *Խնդիր հարուցող* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: *Խնդրահարույց* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից:

Փոխակերպված որոշ բարդությունների երկրորդ բաղադրիչները համընկնում են *բայի առաջին հիմքին*: Որոշ բարդություններ ձևավորվել են *մակբայ + բայահիմք > ածական* կաղապարով, որոնց բաղադրիչներն արտահայտում են «ստորոգյալ-պարագա» հարաբերություն, ինչպես՝ *խոս > (<խոսել)* - ճշմարտախոս, ստախոս, շատախոս, արագախոս, մեծախոս, քչախոս, *շարժ > (<շարժել)* - դանդաղաշարժ, արագաշարժ, դյուրաշարժ, *ծագ > (<ծագել)* - նորածագ:

Այս կառուցատիպի բարդությունների մի զգալի մասը ձևավորվել է *գոյական + բայահիմք > գոյական // ածական* կաղապարով, որոնք բնորոշվում են բաղադրիչների «ստորոգյալ-խնդիր» շարահյուսական հարաբերությամբ, ինչպես՝ *թուխ > (<թխել)* - հացթուխ, *հարդար > (<հարդարել)* - վարսահարդար, մատնահարդար, *դրուժ > (<դրժել)* - ուխտադրուժ, *վաճառ > (<վաճառել)* - հացավաճառ, տոմսավաճառ, *գուշակ > (<գուշակել)* - բախտագուշակ, աստղագուշակ և այլն:

*Գոյական + բայահիմք > գոյական* կաղապարով է ձևավորվել՝ *ցան > (<ցանել)* - սերմնացան, շարքացան, հրացան:

Այս բարդությունների ելակետային կաղապարների բացահայտումը կատարվում է մեթոդական նույն սկզբունքով, ինչ վերոբերյալ բարդությունների դեպքում: Հմտ. *Այս մարդը բախտ է գուշակում* (միջուկային նախադասություն): Այս մարդը մեծ համբավ ունի: Այս մարդը, *որ բախտ է գուշակում*, մեծ համբավ ունի: *Բախտ գուշակող* այս մարդը մեծ համբավ ունի: *Բախտագուշակ* այս մարդը մեծ համբավ ունի:

բ) *Բարդություններ*, որոնց վերջին բաղադրիչն արտահայտում է *հարակապար դերբայի իմաստ*: Այս բարդությունները նույնպես դասակարգվում են ըստ այն հանգամանքի, թե դրանց երկրորդ բաղադրիչը բայի ո՞ր հիմքին է համընկնում:

Այսպես, հետևյալ բարդությունների վերջնաբաղադրիչները համընկնում են գրաբարի *բայերի երկրորդ հիմքին*. Բարդությունները ձևավորվել են *մակբայ + բայահիմք > ածական* կաղապարով, որոնք բնորոշվում են բաղադրիչների «ստորոգյալ-պարագա» հարաբերությամբ.

## Խաչատրյան Լ.

-ել > (<գալ) - նորեկ, դրսեկ, -մուր > (<մտանել) - նորամուտ -կառույց > (<կառուցանել) - նորակառույց, կիսակառույց:

Ստորև բերվող բարդության վերջնաբաղադրիչները համընկնում են բայի առաջին հիմքին.

-խառն > (<խառնել) - արտասվախառն, -պար > (<պատել) - պարսպապատ, ձյունապատ, մշուշապատ, -թուխ > (<թխել) - նորաթուխ և այլն:

Եթե վերականգնենք այս բարդությունների սերող կաղապարներն ըստ անցման (ձևավորման) աստիճանների, ապա պարզ կդառնա, որ դրանց վերջնաբաղադրիչն արտահայտում է հարակատարի իմաստ: Հմմտ.

Դիմացի լեռը պարվել է մշուշով (միջուկային նախադասություն): > Դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

Դիմացի լեռը, որ պարվել է մշուշով, հորիզոնի վերջին կետն է: Մշուշով պարված դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է: Մշուշապար դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

Բ. Անվանական բաղադրիչով բարդությունների վերջնաբաղադրիչի դերում հանդես են գալիս հիմնականում սոմատիզմները, հազվադեպ՝ նրանց հատկանիշները: Այս բարդությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ելնելով արմատական բաղադրիչի գործառական արժեքից (կախյալ և անկախ): Այդ բարդությունները ձևավորվել են ածական + գոյական > ածական կաղապարով և բնորոշվում են բաղադրիչների «որոշիչ-որոշյալ» հարաբերությամբ:

ա) Անկախ վերջնաբաղադրիչ ունեն հետևյալ բարդությունները.

ժպիտ > լուսաժպիտ, քաղցրաժպիտ, ակ(ն) > խաժակն, բյուրակն, հեր > գանգրահեր, թխահեր, շիկահեր, սևահեր, սպիտակահեր, մազ > թավամազ, գանգրամազ, սևամազ, սպիտակամազ, ճակատ > պնդաճակատ, կարծրաճակատ, սիրտ > սևսիրտ և այլն:

Ցույց տանք միջուկային նախադասություններից բարդությունների փոխակերպման աստիճանները՝ համապատասխան օրինակներով:

Լիլիթը լուսավոր ժպիտ ունի (միջուկային նախադասություն): Լիլիթը գեղեցիկ աղջիկ է: Լիլիթը, որ լուսավոր ժպիտ ունի, գեղեցիկ աղջիկ է: Լուսավոր ժպիտ ունեցող Լիլիթը գեղեցիկ աղջիկ է: Լուսաժպիտ Լիլիթը գեղեցիկ աղջիկ է:

բ) Կախյալ բաղադրիչ ունեն այն բարդությունները, որոնց վերջնաբաղադրիչը անեզական գոյական է: Դրանք ձևավորվել են ածական + գոյական > ածական կաղապարով, որոնք ունեն «մի բան ունեցող» հատկանշային նշանակություն, որոնց բաղադրիչները արտահայտում են «որոշիչ-որոշ-

### Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման...

յալ» հարաբերություն: Բարդությունների վերջնաբաղադրիչները փոխակերպված տարբերակներում դրսևորում են դերբայական իմաստներ: Հմմտ.

(Նա) սուր միտք ունի > սուր միտք ունեցող > սրամիտ:

Այդ բարդություններից են՝ *դեմ(ք)* > գեղեցկադեմ, խոժոռադեմ, *հոն(ք)* > մրահոն, սևահոն, կարմրահոն, *ձեռ(ն)* > առատաձեռն, ունայնաձեռն, դատարկաձեռն, ճերմակաձեռն, *հայաց(ք)* > խստահայաց, ուղղահայաց, *միտք(ք)* > թանձրամիտ, ուղղամիտ, սրամիտ, *կամ(ք)* > բարեկամ, չարակամ և այլն: Հմմտ.

*Դորիանը գեղեցիկ դեմք ունի* (միջուկային նախադասություն): Դորիանը, որ *գեղեցիկ դեմք ունի*, կարծես չի ծերանում: *Գեղեցիկ դեմք ունեցող* Դորիանը կարծես չի ծերանում: *Գեղեցկադեմ* Դորիանը կարծես չի ծերանում:

Լեզվում վերացարկվածությունը հասցնում է այն բանին, որ ստեղծված բարդության կաղապարներն ինքնուրույն արժեք են ստանում, և նրանցով համաբանորեն կազմվում են նոր բառեր՝ անկախ բարդության կաղապարի համար հիմք ծառայած բառակապակցությունների և նախադասությունների կաղապարներից:

Գ. Բայաբաղադրիչներով բարդությունների սերման կաղապարների վերաբերյալ Գ. Զահուկյանը նշում է, որ հաճախ դժվար է սահման դնել այս տիպի բարդ հիմքերի և բայական հիմքերով կազմված գոյականներից ու ածականներից երկրորդաբար կազմված բայերի միջև. այսպես, ահաբեկ-ը կարող է մեկնաբանվել կա՛մ որպես *ահաբեկ* ածականի բայացված ձև, կա՛մ դիտվել որպես *ահով բեկ-ել* բառակապակցությունից ստացված բարդություն. այսպիսի դեպքերում հարկավոր է ստուգել, թե արդյոք բարդ հիմքը անկախ չի՞ գործածվում որպես ածական կամ գոյական<sup>6</sup>:

Այս կարգի բարդությունները առաջացել են *գոյական + բայ > բայ* կաղապարներով, ինչպես՝ *ալիքներով կոծել > ալեկոծել*, *անդամները հատել > անդամահատել*, *արդյունքը հանել > արդյունահանել*, *արծաթով պատել > արծաթապատել*, *ոսկով (լուծույթով) ջրել > ոսկեջրել*, *ոսկով (զ)օծել > ոսկեզօծել*, *ահով զանգել > ահազանգել*, *ասեղ(ներ)ով գործել > ասեղնագործել*, *նկար(ներ)ով զարդարել > նկարազարդել*, *ական(ներ)ով պատել > ականապատել* և այլն:

Վերականգնենք այս կարգի բարդության սերիչ կաղապարներից՝ փոխակերպման օրինակներով: Հմմտ.

<sup>6</sup> Զահուկյան 1989, 223:

## Խաչատրյան Լ.

Վարպետը մտածում է: *Վարպետը նկարներով է զարդարում որմնապատը* (միջուկային նախադասություն): Վարպետը մտածում է *նկարներով զարդարել* որմնապատը: Վարպետը մտածում է *նկարազարդել* որմնապատը:

Որոշակի դիրքում բայական բարդությունների սերիչ կաղապարների (բառակապակցությունների) անվանական բաղադրիչներ են դառնում ածական// մակբայ տարարժեք բառերը. նման բարդությունները ձևավորվում են *ածական// մակբայ + բայ > բայ* կաղապարներով, ինչպես՝ շատ խոսել > շատախոսել, բռնի գրավել > բռնագրավել, երկար ձգել > երկարաձգել, համառոտ գրել > համառոտագրել, ամուր պնդել > ամրապնդել:

Այս կարգի բարդությունների սերիչ կաղապարները՝ միջուկային նախադասություններ ու բառակապակցություններ, հատկանշվում են հիմնաբաղադրիչների ընթացայնության գաղափարով, որ պահպանվում են փոխակերպների իմաստային կառուցվածքում: Հմմտ. (Նա) մտածում է: (Նա) *համառոտ է գրում* (միջուկային նախադասություն): Նա մտածում է *համառոտ գրել*: Նա մտածում է *համառոտագրել*:

2. *Ածանցավոր կազմությունները* հետևանք են լեզվական միավորների աստիճանական վերացարկման գործընթացի. փոխակերպման վերջնական փուլում տեղի է ունենում բայական բովանդակության վերացարկում, և առարկայական նշանակությամբ միավորները (բարդության բաղադրիչները) վերաճում են բառակազմական երկրորդական ձևայինների՝ իրենց բառակազմական նշանակությամբ արտահայտելով բարդության վերջին բաղադրիչների (նյութական) նշանակությունը:

Ածանցավոր կազմությունները բաժանվում են երկու խմբի. մի դեպքում փոխակերպները վերջաձանցավոր կազմություններ են, երկրորդ դեպքում՝ նախաձանցավոր:

Ա. *Վերջաձանցավոր կազմություններ*. այս կարգի բառերի ածանցները փոխարինում են *ունենալ* բայի ենթակայական կամ հարակատար դերբայներին՝ «մի բան ունեցող / ունեցած կամ չունեցող / չունեցած» նշանակություններով:

Վերջաձանցավոր փոխակերպների սերող հիմքերը հիմնականում գոյական անուններ են (բաղադրյալ հիմքերը՝ թվական լրացումներով, որոնք սերիչ կաղապարներում ունեցել են խնդրային գործառույթներ): Հմմտ. *-անի* > յոթգլխանի, երկհարկանի, քառոտանի, միոտանի, *-ավետ* > բուրավետ, ծաղկավետ, հոտավետ, բուրումնավետ, գինեվետ, *-անոց* > երեքանոց, հինգկուպեկանոց, *-ապ* > պոչատ, գունատ, կիսատ, կոնատ, *-(ա)պան* > այ-

### Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման...

գեպան, դոնապան, կառապան, բարապան, պարտիզպան,  $-(ա)լի >$  արյունալի, ցավալի,  $-եղ >$  ուժեղ, համեղ, զորեղ, շնչեղ, ծայնեղ, մարմնեղ,  $-յա / ե >$  ոսկյա / ոսկե, արծաթյա / արծաթե, երկաթյա / երկաթե,  $- ուր >$  բրդոտ, ճարպոտ, յուղոտ, մրոտ և այլն:

Ինչպես նկատելի է այս բաղադրությունների ձևավորման դիտվածքից, դրանք առաջացել են *գոյական + ածական > ածական* փոխակերպական կաղապարով:

Վերականգնենք դրանց փոխակերպական քայլերի կաղապարները: Նկատենք, որ ածանցական կաղապարներում ածանցը փոխարինում է հատկանշային բովանդակություն ունեցող դերբայներին: Հմմտ.

*Բնակարանը երկու հարկ ունի* (միջուկային նախադասություն): Այն գտնվում է գլխավոր փողոցի վրա: *Բնակարանը, որ երկու հարկ ունի*, գտնվում է գլխավոր փողոցի վրա: *Երկու հարկ ունեցող* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա: *Երկհարկանի* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա:

Որոշակի դեպքերում փոխկաղապարված կապակցություններում մակբայական բաղադրիչները կարող են փոխարինվել մակբայանիշ նախածանցներով, այդ դեպքում բարդությունները հարադրությունների կամ ազատ կապակցությունների նկատմամբ ցուցաբերում են իմաստային նրբերանգներ: Բաղադրության կաղապարն է՝ *ածանց + բայ > բայ*.

*ա) դուրս > արտ.* դուրս բերել > արտաբերել, դուրս հանել > արտահանել, դուրս մղել > արտամղել, դուրս շնչել > արտաշնչել,

*բ) ներս > ներ.* ներս դնել > ներդրել, ներս մտցնել > ներմուծել, ներս բեռնել > ներբեռնել,

*գ) կրկին//նորից > վեր(ա).* նորից կազմել > վերակազմել, նորից զինել > վերազինել, նորից շինել > վերաշինել, կրկին՝ նորից դառնալ > վերադառնալ, նորից գրել > վերագրել,

*դ) բարձր > գեր.* բարձր դասել > գերադասել, բարձր գնահատել > գերազնահատել,

*ե) ցածր > ստոր.* ցածր դասել > ստորադասել,

*զ) հակառակ > հակ.* հակառակ ասել > հակասել,

*է) հավասար > համ.* հավասար դասել > համադասել:

Վերականգնենք այս բարդությունների սերիչ կաղապարներից՝ փոխակերպման օրինակներով: Հմմտ. Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում: Ֆրանսիական կառավարությունը *դուրս է հանում* ներգաղթյալ-

## Խաչատրյան Լ.

ներին (միջուկային նախադասություն): Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում՝ *դուրս հանել* ներգաղթյալներին: Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում *արտահանել* ներգաղթյալներին:

*Բ. Նախաձանցավոր կազմություններ.* այս կարգի փոխակերպներն արտահայտում են «մի բան չունեցող, մի բանից զուրկ» իմաստներ՝ պայմանավորված նախաձանցի բառակազմական նշանակությամբ: Տվյալ դեպքում, մինչև ածանցավոր կազմության ձևավորումը, հատկանիշի բացակայությունը արտահայտվել է նյութական նշանակություն ունեցող բառերով: Ածանցի (ածանցավոր կազմության) ի հայտ գալը պայմանավորված է վերացարկվածության առավել բարձր աստիճանով:

Այդ բառերը հիմնականում ժխտական նախաձանցով կազմություններ են, ինչպես՝ *ան-* > անտուն, անգո, անիմաստ, անկախ, անսահման, անհրապույր, *դժ-* > դժկամ, դժգույն, դժգոհ, *ապ-* > ապաբախտ, ապօրինի, ապուշ, ապերջանիկ, ապերախտ, *տ-* > տհաս, տմարդի, տկար, *չ-* > չկամ, չտես, չհաս, չբեր և այլն:

Նախաձանցավոր կազմություններն առաջացել են *ածանց + գոյական* > *ածական*, *ածանց + բայահիմք* > *ածական*, *ածանց + ածական* > *ածական* կաղապարներով:

Վերականգնենք այս բառերի փոխակերպական քայլերի կաղապարները.

*Այս մարդը տուն չունի* (միջուկային նախադասություն): Նա մոլորված է: *Այս մարդը, որ տուն չունի*, մոլորված է: *Տուն չունեցող* մարդը մոլորված է: *Անտուն* մարդը մոլորված է:

Բաղադրությունների մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերջանում են **ածանցակերպներով**:

Այդ կազմությունները ձևավորվել են *բայահիմք + ածանցակերպ* > *գոյական* կամ *ածական* կաղապարներով և սովորաբար արտահայտում են ենթակայական դերբայի նշանակություն: Այդ բառերից են՝ *-գեղ* > (< գիտենալ – իմացող) - լեզվագետ, գրականագետ, իրավագետ, բնագետ, *-գործ* > (< գործել – որևէ գործով զբաղվող) - հողագործ, գորգագործ, թիթեղագործ, մանածագործ, *-վար* > (< վարել – վարող) - նավավար, գործավար, հեռախոսավար, մեքենավար, խմբավար, *-բան* > (< որևէ ուսմունք իմացող) - իրավաբան, լեզվաբան, հոգեբան, փաստաբան, *-բեր* > (< բերել - բերող) - անձրևաբեր, ամպրոպաբեր, լրաբեր, գրաբեր, նամակաբեր:

Դիտարկենք այս բառերի սերման կաղապարները՝ փոխակերպման օրինակներով.

### Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման...

*Արամը մեքենա է վարում* (միջուկային նախադասություն): Նա ճանաչված մասնագետ է: *Արամը, որ մեքենա է վարում*, ճանաչված մասնագետ է: *Մեքենա վարող* Արամը ճանաչված մասնագետ է: *Մեքենավար* Արամը ճանաչված մասնագետ է:

#### **Եզրակացություններ**

Փոխակերպումը լեզվափոխության գործընթաց է, որ կապվում է նախ՝ օբյեկտիվ իրականության, ապա նաև լեզվական վերացարկման գործընթացի հետ՝ որպես արտացոլման բարձր մակարդակի դրսևորում: Փոխակերպական գործընթացն ուղեկցվում է *նախադասություն > բառապակցություն > բաղադրյալ բառեր* անցման օղակներով, որոնք հատկանշվում են վերացարկվածության տարբեր աստիճանով:

Փոխակերպման գործընթացում փոխակերպների իմաստային բեռնվածությունը կրում է բայական բաղադրիչը, որ նախադասությունների պարզ ստորոգյալից փոխակերպվում է բառակապակցության դերբայի, իսկ բարդության մեջ՝ բայահիմքի՝ հանդես գալով որպես դոմինանտ վերջնաբաղադրիչ:

#### **ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Խաչատրյան Լ.Մ.** 1996, Խոսքիմասային տարաբեռնությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, ՀՀ ԳԱ «Գիտություն», Երևան, 257 էջ:

**Խաչատրյան Լ.Մ.** 2021, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, ՀՀ ԳԱ «Գիտություն», Երևան, 446 էջ:

**Պետրոսյան Հ.Զ.** 1987, Հայերենագիտական բառարան, «Հայաստան», Երևան, 686 էջ:

**Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյուլյան Թ.Ա.** 1975, Լեզվաբանական բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 316 էջ:

**Ջահուկյան Գ.Բ.** 1973, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 502 էջ:

**Ջահուկյան Գ.Բ.** 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 319 էջ:

**Ахманова О.С.** 1969, Словарь лингвистических терминов, «Советская Энциклопедия», Москва, 605 с.

**Соколова Г.Г.** 1973, Транспозиция прилагательных и существительных, изд.-во «Высшая школа», Москва, 235 с.

**Стариченок В.Д.** 2008, Большой лингвистический словарь, изд.-во «Феникс», Ростов-на-Дону, 811 с.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԹ – «Գրական թերթ»

ՀՂ – Հովհ. Ղուկասյան

ՍԽ – Սերո Խանգադյան

ЛЭС – Лингвистический энциклопедический словарь, 1990, «Советская Энциклопедия», Москва, 683 с.

## ТРАНСФОРМАЦИЯ КАК АБСТРАГИРОВАННЫЙ МЕХАНИЗМ ЯЗЫКОВОЙ РЕФЛЕКСИИ

ХАЧАТРЯН Л.

### Резюме

**Ключевые слова:** трансформация, абстракция, словосочетание, сложные слова, префиксальная модель, суффиксальная модель, аффиксоид.

Трансформация – это выражение одного и того же языкового содержания с помощью альтернативных структур, рассматриваемая как абстрагированный механизм языковой рефлексии. Процесс трансформации осуществляется поэтапно: предложение – фраза – составное слово, которые характеризуются разной степенью абстракции.

Моделями трансформации предложения в словосочетание являются подчинительные словосочетания, которые превращаются из коммуникативных в номинативные единицы (свободные и устойчивые сочетания). Устойчивые сочетания образуются путем соответствующего смещения синтаксической позиции свободной модели или посредством эллипсиса компонентов.

Модели составных и производных слов, в свою очередь, характеризуются разной степенью абстракции. Суффикс имеет более высокую степень абстракции, чем компонент сложного слова. Модели сложных слов характеризуются наличием конечных компонентов различных конструкций: глагольные основы, именные компоненты и глагольные компоненты. Деривационные модели бывают двух видов: префиксальные и суффиксальные.

В процессе трансформации глагольный компонент несет на себе семантическую нагрузку преобразований. Из простого предиката предложения он превращается в причастие в рамках словосочетания, а в сложных словах – в глагольную основу, выступающую в качестве доминирующего компонента.

## TRANSFORMATION AS AN ABSTRACTED MECHANISM OF LINGUISTIC EXPRESSION

KHACHATRYAN L.

### Summary

**Key words:** transformation, abstraction, word-complexity, word-combination, prefixal pattern, suffixal pattern, affixoid.

Transformation is the expression of the same linguistic content using alternative structures, it is seen as an abstracted mechanism of linguistic expression. The transformation is accomplished through sentence-phrase-composition stages which are characterized by different degrees of abstraction.

The generating patterns of transformation of a sentence into a word-combination are subordinate word-combinations which transform from communicative into nominal units (free and fixed combinations). Fixed combinations are formed by the corresponding displacement of the syntactic position of a free pattern or by means of the elipsis of the components.

Patterns of compound and derivative words are in their turn characterized by various degrees of abstraction. A suffix has a higher degree of abstraction than a component of a compound word. The patterns of compound words are characterized by the existence of final components and they come in a variety of constructions: verb-stems, nominal components, and verb-components. Derivational patterns are characterized from two perspectives: prefixal and suffixal.

In the process of transformation – the verbal component bears the semantic load of transformations. It is transformed from a simple predicate of the sentence into a derived word-combination, whereas in the compound words – into a verb-stem acting as the dominant component.